«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
փ.գ.դ., պրոֆեսոր
_____Պ.Ս. Ավետիսյան

«23» նոյեմբերի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

Գայանե Ռուբիկի Թովմասյանի «Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Զբոսաշրջության և ծառայությունների ոլորտի» ու «Կառավարման և բիզնեսի» ամբիոնների 2022 թվականի նոյեմբերի 23-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 21):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Աբրահամյան Վահրամ Գևորգի՝** տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր **(գրախոսող)**, **Բաբայան Կարինե Բորիսի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մոմջյան Մարիամ Բաբկենի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գինոսյան Քրիստինե Հայկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կոջոյան Հռիփսիմե Արմենի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մկրտիչյան Նարինա Գրիգորի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Դավթյան Տիգրան Շչորսի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Զբոսաշրջության և ծառայությունների ոլորտի» ամբիոնի վարիչ, **Մանթարյան Ստեփան Կարապետի,** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ **(գրախոսող)**, **Կանդիլջյան Հովհաննես Մանուկի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս **(գրախոսող)**, **Սարգսյան Տիգրան Արտավազդի՝** աշխարհ. թեկնածու, դոցենտ, **Սուվարյան Սեյրան Ռաֆիկի՝** աշխարհ. թեկնածու, դոցենտ, **Բախշեցյան Ժաննա Աշոտի՝** դասախոս, **Թորոսյան Սաթիկ Ռուբենի՝** դասախոս, **Մարտիրոսյան Արտյոմ Ռուդիկի՝** դասախոս, **Սահակյան Վարդիշահ Աղասու՝** դասախոս, **Կարապետյան Արմինե Եղիշեի՝** ասիստենտ, **Գրիգորյան Անահիտ Հարությունի՝** ասիստենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում անկախացման և շուկայական տնտեսությանն անցման ժամանակաշրջանից ի վեր իրականացվող բարեփոխումների կարևորագույն ոլորտներից է զբոսաշրջությունը, որի զարգացումը պահանջում է էական փոփոխություններ մի շարք բնագավառներում: Վերջին տարիներին զբոսաշրջությունը համարվում է համաշխարհային տնտեսության ամենաարագ զարգացող և շահութաբերության բարձր մակարդակ ունեցող ոլորտներից մեկը:

Հայաստանում, հաշվի առնելով առկա ռեսուրսային ներուժը, զարգացման մեծ հեռանկարներ ունեն զբոսաշրջության հետևյալ հիմնական տեսակները՝ կրոնական, պատմամշակութային, առողջարանային, սպորտային և արկածային, բժշկական, գաստրոնոմիական, ագրո- և էկո-, փառատոնային, քաղաքային և այլն: Հայաստանը, սակայն, չնայած վերջին տարիներին կատարվող աշխատանքներին, դեռ հայտնի զբոսաշրջային վայր չէ աշխարհում:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտներից կարելի է նշել՝ ոլորտի թերի օրենսդրական դաշտը, ըստ զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման ծրագրերի բացակայությունը, վիճակագրական հաշվառման գործընթացը, մարքեթինգային գործունեությունը, ծառայությունների որակը, ենթակառուցվածքների վիճակը, ոլորտի կրթության և աշխատաշուկայի միջև եղած բացերը:

Վերջին տարիներին տարբեր հեղինակների կողմից կատարվել են զբոսաշրջության ոլորտի գիտական հետազոտություններ և վերլուծություններ տարբեր տեսանկյուններից, սակայն դեռևս զբոսաշրջության զարգացման վերաբերյալ համապարփակ գիտական հետազոտությունների խիստ պակաս է զգացվում, ինչը և պայմանավորում է ներկայացվող թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է՝ ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման տեսական, գործնական և հայեցակարգային հիմքերի մշակումը:

Առաջադրված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել են **հետևյալ**

խնդիրները.

- ✓ վերլուծել զբոսաշրջության զարգացման տեսամեթոդական հիմքերը,
- ✓ հետազոտել միջազգային զբոսաշրջության արդի վիճակը, զարգացման միտումներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև զբոսաշրջության կառավարման և զարգացման համաշխարհային փորձը,
- ✓ վերլուծել զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման միտումները, ինչպես նաև ոլորտի կարգավորման օրենսդրահիրավական դաշտը և կառավարման համակարգը ՀՀ-ում,
- ✓ տնտեսամաթեմատիկական մեթոդների օգնությամբ իրականացնել ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացման կանխատեսումներ և գնահատել զբոսաշրջության ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա,
- ✓ բացահայտել ՀՀ-ում զբոսաշրջության հիմնական տեսակների զարգացման ներուժային հնարավորությունները և հեռանկարները,
- ✓ վերլուծել զբոսաշրջության զարգացման խոչընդոտները (կապված մարքեթինգային գործունեության, ծառայությունների որակի և մրցունակության բարձրացման, ոլորտի կրթության բարելավման և այլնի հետ)՝ դրանց լուծման ուղիների բացահայտման և մշակման նպատակով,
- ✓ մշակել ՀՀ-ում զբոսաշրջիկների գոհունակության ինդեքսի կիրառման մեթոդաբանությունը,
- ✓ վերլուծել ՀՀ-ում զբոսաշրջության կայուն զարգացման հնարավորությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են **ըստ հեղինակի**.

1. Վիճակագրական մեթոդների օգնությամբ գնահատվել է ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի, նրանց կատարած ծախսերի, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում պետական ծախսերի և կապիտալ ներդրումների ազդեցությունը ՀՆԱ-ի,

զբաղվածության, կացության և հանրային սննդի կազմակերպման ծառայությունների ծավալների վրա, ՀՀ մարզերի և Երևանի համար գնահատվել են զբոսաշրջային ծառայությունների և ՀՆԱ-ի ու զբաղվածության միջև կոռելյացիոն կապերը:

2. Իրականացվել են ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կանխատեսումներ ARIMA մեթոդով, ինչպես նաև ներքին զբոսաշրջիկների թվաքանակի կանխատեսումներ՝ էկոնոմետրիկական ստատիկ և դինամիկ մոդելների օգնությամբ, որի արդյունքում բացահայտվել են ներքին զբոսաշրջության վրա ազդող գործոններն ու գնահատվել դրանց ազդեցության չափը, իսկ ռեկուրսիվ և սահող կանխատեսման մոդելավորման արդյունքներով հիմնավորվել է, որ փոքր մասշտաբի (AR, VAR և BVAR) մոդելներով զբոսաշրջիկների թվաքանակի աճի կանխատեսման արդյունքները վիճակագրորեն չեն տարբերվում բազմաթիվ գործոններ հաշվի առնող բարդ մոդելների (FAAR, FAVAR և BFAVAR) կողմից ստացված կանխատեսման արդյունքներից:

3. ՀՀ-ում զբոսաշրջության առավել հեռանկարային տեսակների զարգացման հնարավորությունների և հիմնախնդիրների վերլուծության արդյունքում մշակվել են մի շարք գործնական և հայեցակարգային բնույթի միջոցառումներ՝ ուղղված դրանց զարգացման ռազմավարական ծրագրերի մշակմանը, մարքեթինգային միջոցառումների իրականացմանը, նոր երթուղիների կազմակերպմանը և այլն:

4. Իրականացվել է զբոսաշրջության մարքեթինգի և զարգացմանն ուղղված պետական ծախսերի և ներգնա զբոսաշրջության ու դրանից ստացվող եկամուտների միջև կոռելյացիոն համեմատական վերլուծություն ՀՀ և 40 երկրների միջև, վերլուծվել են ՀՀ-ում իրականացվող զբոսաշրջային մարքեթինգային գործողությունները և մշակվել համապատասխան քայլեր՝ զբոսաշրջային մարքեթինգի և բրենդինգի բարելավման նպատակով:

5. Հյուրանոցային ծառայությունների որակի գնահատման նպատակով մշակվել է հատուկ գործիք՝ ARMQUAL, որի օգնությամբ ծառայությունների որակի հիմնական պարամետրերի հատկորոշմամբ հյուրանոցներում իրականացվել է մատուցվող ծառայությունների որակի գնահատում, ստացված արդյունքները վերլուծվել են Կարևորություն-Գործունեություն վերլուծության մատրիցայի միջոցով, կատարվել են հիմնական ցուցանիշների միջև վիճակագրական նշանակալիության կապերի գնահատումներ:

6. Մշակվել է զբոսաշրջիկների գոհունակության գնահատման ձևաչափ և հարցաթերթ, որի օգնությամբ ներգնա զբոսաշրջիկների շրջանում իրականացված հարցումների արդյունքում հաշվարկվել է զբոսաշրջիկների գոհունակության գնահատման ինդեքսը, արդյունքները վերլուծվել են Կարևորություն-Գործունեություն վերլուծության մատրիցայի միջոցով և ներկայացվել են հիմնավոր մոտեցումներ՝ բացահայտված հիմնախնդիրների լուծման նպատակով:

7. Զբոսաշրջության կրթական ծառայություններ մատուցող ուսումնական հաստատությունների և կենտրոնների կրթական ծրագրերի ուսումնասիրության և աշխատաշուկայում առկա աշխատատեղերին ներկայացվող պահանջների հետ դրանց համեմատության, ինչպես նաև, ուսանողների, շրջանավարտների, ոլորտի հասարակական և մասնավոր կազմակերպությունների շրջանում կատարված հարցումների հիման վրա մշակվել է միջոցառումների փաթեթ՝ ուղղված ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի բարելավմանն ու ոլորտի համար գործնական հմտություններով և կիրառական կարողություններով օժտված մասնագետների պատրաստմանը, կրթական հաստատությունների ներքին և միջազգային համագործակցության ընդլայնմանն ու հաստատությունների նյութատեխնիկական բազայի ընդլայնմանը, ինչպես նաև մատուցվող կրթական ծառայությունների որակի ապահովմանը և վերահսկողությանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 448 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը և հավելվածները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսամեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը, արդյունքների գործնական նշանակությունը,

հետազոտության փորձարկումը և հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Զբոսաշրջության զարգացման տեսամեթոդական և գործնական հիմքերը»*** գլխում ներկայացվել են զբոսաշրջության հասկացությունը և տնտեսագիտական բովանդակությունը, զբոսաշրջության զարգացման միտումներն աշխարհում, զբոսաշրջության կառավարման և զարգացման միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ ***«Զբոսաշրջությունը որպես ՀՀ տնտեսության ոլորտ»*** գլխում ուսումնասիրվել են զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման միտումները ՀՀ-ում, Զբոսաշրջության կարգավորման օրենսդրահիրավական դաշտը և կառավարման համակարգը ՀՀ-ում, իրականացվել է ՀՀ զբոսաշրջության ոլորտի տնտեսական ազդեցության հիմնական ցուցանիշների ներկայացում, ինչպես նաև ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջության մոդելավորման և կանխատեսման փորձ՝ տնտեսաչափական մեթոդների օգնությամբ: Գլխի վերջում հեղինակը քննարկել է ՀՀ-ում զբոսաշրջության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ ***«Զբոսաշրջության հիմնական տեսակների զարգացման նախադրյալներն ու հեռանկարները ՀՀ-ում»*** գլխում ներկայացվել են կրոնական և պատմամշակութային զբոսաշրջության զարգացման, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման, գաստրոնոմիական և գինու զբոսաշրջության, ագրո- և էկո-զբոսաշրջության հնարավորությունները, նախադրյալները և զարգացման հեռանկարները ՀՀ-ում: Ներկայացվել են նաև ՀՀ մարզերի զբոսաշրջային հիմնական երթուղիները և զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները:

Ատենախոսության չորրորդ ***«Զբոսաշրջության զարգացման հիմնական ուղիները ՀՀ-ում»*** գլխում հեղինակն իրականացրել է ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն, քննարկել է զբոսաշրջության զարգացման մարքեթինգային հիմնահարցերը ՀՀ-ում, իրականացրել է զբոսաշրջիկների գոհունակության գնահատում, ներկայացրել է զբոսաշրջության կայուն զարգացման անհրաժեշտությունը ՀՀ-ում:

Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում շարադրվել են հետազոտության ուսումնասիրություններից և գնահատականներից բխող հիմնական եզրահանգումները և առաջարկությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են բազմաթիվ թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1. Ատենախոսի կողմից ներկայացվող գիտական նորույթի առաջին և երկրորդ կետերը նորույթ չեն կարող հանդիսանալ, քանի որ իրենցից են ներկայացնում ընդամենը իրականացված պարզ քանակական և ռեգրեսիոն վերլուծությունների արդյունքներ:
2. Ատենախոսության գիտական նորույթների երրորդ կետում ներկայացված դրույթները առաջարկություններ են, ուստի նորույթ չեն կարող հանդիսանալ:
3. Ատենախոսության գիտական նորույթի չորրորդ կետը ևս որպես նորույթ չի կարելի որակել, քանի որ այստեղ ներկայացվում են կոռելյացիոն համեմատական վերլուծության արդյունքներն և դրանց հիման վրա մշակված որոշ առաջարկություններ:
4. Ատենախոսության նորույթների վեցերորդ կետում ներկայացված հարցման արդյունքները վստահելի չեն կարող համարվել, քանի որ ատենախոսի կողմից ներկայացվող ընտրանքը ներկայացուցչական չէ (հարցվողները կազմում են զբոսաշրջիկների ընդհանուր քանակի ընդամենը 0,026 տոկոսը):
5. Ատենախոսության նորույթի յոթերորդ կետը նույնպես առաջարկությունների մի շարք է, որը դոկտորական ատենախոսության նորույթ չի կարելի համարել:
6. էջ 53-ում հեղինակը օգտագործում է «դեստինացիաների մարքեթինգային կազմակերպություններ» եզրույթը, սակայն ժամանակակից զբոսաշրջության մեջ դրանք անվանում են DMO-ներ (Destination Management Organizations (զբոսաշրջային ուղղության կամ նպատակակետի կառավարման կազմակերպություններ)):
7. 33-րդ հղումում հեղինակը նշում է Վ.Ս.Բոգոյուբովի աշխատությանը, սակայն ներկայացնում է ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի սահմանումը:

8. էջ 68-ում հեղինակը ներկայացնում է կորոնավիրուսի հետևանքներին հակազդման միջոցառումների համապարփակ ծրագիրը, սակայն անդրադարձ չի կատարում կիրառված միջոցառումների արդունավետությանը:
9. էջ 78-ում հեղինակը նշում է, որ շատ զբոսաշրջիկներ սեփական մեքենայով են գնում տարբեր վայրեր մեկօրյա հանգստի՝ առանց գիշերակացի, և այդ իսկ պատճառով 2020թ. կրճատվեցին նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության ծավալները: Հարկ է նշել, որ այս դատողությունը սխալ է, քանի որ անձնական մեքենաներով ճամփորդող զբոսաշրջիկները ի սկզբանե այդ հյուրանոցների հաճախորդները չէին և ոչ մի չեղարկում այս մասով տեղի չի ունեցել:
10. 91-93 էջերում հեղինակն առաջարկում է Զբոսաշրջության կոմիտեի կառուցվածքի փոփոխություն՝ հղում կատարելով կառույցի թերի աշխատանքներին: Նման առաջարկություններ կատարելիս ավելի ճիշտ կլիներ, որ հեղինակը հիմնվեր Զբոսաշրջության կոմիտեի աշխատանքի բովանդակության, այլ ոչ թե կառուցվածքային մանրամասների վրա: Բացի այդ, հեղինակը շատ մակերեսորեն է ներկայացնում առաջարկվող բաժինների և վարչությունների գործառույթները: Անհասկանալի է նաև, թե ինչու հեղինակի կողմից առաջարկվող ստորաբաժանումները պետք է լինեն յոթ վարչություններ և մեկ բաժին: Հարկ է նշել, որ ՀՀ-ում գործում են բազմաթիվ զբոսաշրջային ընկերություններ, որոնք զբաղվում են արտագնա զբոսաշրջությամբ, սակայն անհասկանալի է, թե հեղինակի կողմից առաջարկվող Զբոսաշրջության կոմիտեի կառուցվածքային որ ստորաբաժանումն է պատասխանատու լինելու վերջիններիս համար:
11. 2.2 ենթագլուխը նվիրված է ՀՀ-ում զբոսաշրջության կարգավորման օրենսդրաիրավական դաշտին և կառավարման համակարգին, սակայն հեղինակը ներկայացնում է մանրամասները մեծամասամբ ազգային մակարդակում: Ենթագլխում ոչ մի խոսք չկա ՀՀ մարզերում զբոսաշրջության կառավարման համակարգի, զբոսաշրջության պատասխանատու մարմինների լիազորությունների, գործառույթների և այլնի մասին:

12. էջ 117-ում ավելի ճիշտ կլիներ, եթե հեղինակը օգտագործեր «արտագնա տուրփաթեթ» եզրույթը՝ «արտաքին տուրփափեթի» փոխարեն:
13. էջ 121-ում անհասկանալի է հեղինակի կողմից օգտագործված «ներքին հյուրանոցների գներ» եզրույթը:
14. էջ 156-ում հեղինակն առաջարկում է ՀՀ զբոսաշրջային պաշտոնական վեբկայքում ստեղծել առանձին բաժին՝ հայկական եկեղեցիների և վանական համալիրների մասին, և պնդում է, որ ՀՀ–ում առկա 1475 եկեղեցիները և 610 մատուռները՝ որպես զբոսաշրջային ռեսուրս պետք է պատշաճ ներկայացված լինեն: Կարծում ենք, որ ՀՀ պաշտոնական զբոսաշրջային կայքէջում նման տեղեկատվության տեղավորումը անիմաստ է, քանի որ կայքը պետք է ունենա գովազդային բնույթ, իսկ նման դեպքում կունենա հանրագիտարանային ֆորմատ: Կան բազմաթիվ տեղեկատվական կայքեր, որտեղ կարող է ներառվել նման տեղեկատվությունը: Բացի այդ, պարզ չէ, թե այս տեղեկատվությունը ով պետք է հավաքագրի և ներկայացնի: Նման առաջարկ կա նաև աշխատանքի 249-րդ էջում:
15. էջ 174–175–ում հեղինակը նշում է, որ ՀՀ-ում գաստրոտուրերի քանակը սահմանափակ է և զբոսաշրջիկներն ընտրում են հիմնականում դասական փաթեթներ որոշակի գաստրոնոմիկ փորձառություններով: Բացի այդ, հեղինակի կողմից ներկայացվում են մի քանի ընկերություններ, որոնք զբաղվում են գաստրոզբոսաշրջությամբ: Հարկ է նշել, որ ՀՀ ներգնա զբոսաշրջային ընկերությունների մեծամասնությունը ունի գաստրոզբոսաշրջային փաթեթներ, որոնք վաճառվում են B2B ֆորմատով արտասահմանյան արտագնա կազմակերպություններին, և ՀՀ ընկերությունները իրենց փաթեթների մասին տեղեկատվությունը չեն հրապարակում պաշտոնական կայքէջերում, մինչդեռ իրենց գործընկեր կազմակերպությունը խթանում է դրանք արտերկրում: Լավ կլիներ, որ հեղինակի կողմից ուսումնասիրվեին միջազգային շուկայում դեպի Հայաստան առաջարկվող գաստրոնոմիկ փաթեթները՝ ավելի ճիշտ և հիմնավորված պնդումներ ներկայացնելու նպատակով:
16. էջ 199-ում հեղինակը պնդում է, որ թրեքինգի համար ամենատարածված երթուղիներից է Պարզ Լիճ – Գոշավանք արահետը: Հարկ է նշել, որ նման պնդումը

հիմնավորված չէ: Կան բազմաթիվ այլ երթուղիներ, որոնք թե ներքին, թե ներգնա զբոսաշրջիկների մոտ մեծ հետաքրքրություն են առաջացնում (Քարի Լիճ – Ամբերդ երթուղի, Հաղպատ-Սանահին երթուղի և այլն): Եթե հեղինակի կողմից նման պնդում է ներկայացվում, ապա այն պետք է հիմնված լինի ՀՀ և միջազգային զբոսաշրջային օպերատորների փաթեթների վերլուծության վրա:

17. 206-րդ էջում հեղինակն առաջարկում է ԲՈՒՀ-երում ավելացնել «Գիտական զբոսաշրջություն» դասընթացը, սակայն չի ներկայացնում դրա մանրամասն նկարագրությունը ոչ աշխատանքում և ոչ էլ հավելվածներում: Աշխատանքը կշահեր, եթե առաջարկություններին զուգահեռ ներառվեին նաև մանրամասն նկարագրված իրականացման ծրագրերն ու քայլերը:
18. Էջ 209-210-ում հեղինակը անդրադառնում է գործարար զբոսաշրջությանը, դրա զարգացման հիմնական քայլերին, սակայն ոչ մի բան չի նշվում ՀՀ-ում գործարար զբոսաշրջության համար առկա ռեսուրսների՝ մասնավորապես առկա կոնֆերանս և համաժողովների սրահների, առանձին մահճակալներով երկտեղանի հյուրանոցային համարների և այլնի մասին:
19. Էջ 222-ում հեղինակի կողմից ներկայացվում են տարբեր առաջարկություններ, որոնց իրագործման մանրամասները բացակայում են, ինչպես նաև չեն իրականացվել գոնե մոտավոր հաշվարկներ:
20. Էջ 236-ում հեղինակը պնդում է, որ պետք է նոր փաթեթներ մշակել և ներթափանցել ՀՀ-ի համար առավել հեռանկարային շուկաներ՝ օրինակ բերելով Չինաստանը: Սակայն չկա ոչ մի վերլուծություն, թե ինչու կարող է Չինաստանը առավել հեռանկարային լինել քան այլ երկիր, օրինակ՝ Հնդկաստանը:
21. Նույն էջում հեղինակը նշում է, որ պետք է Վրաստանի և Իրանի հետ ձևավորել տարածաշրջանային փաթեթներ, սակայն չի վերլուծում տարածաշրջանային այն փաթեթները, դրանց առանձնահատկությունները, առաջարկը և բացերը, որոնք առկա են շուկայում:
22. Էջ 240-ում հեղինակը պնդում է, որ կատարվել է որոշ նպատակային շուկաների ուսումնասիրություն՝ մասնավորապես հղում անելով Չինաստանի օրինակին:

Աշխատանքում և հղում արված հոդվածում չեն ուսումնասիրվել չինացի զբոսաշրջիկների նախընտրելի հիմնական զբոսաշրջային ուղղությունները, սպառվող կամ հայտնիություն ու պահանջարկ վայելող փորձառությունները, փաթեթները և այլն:

23. Էջ 272-ում հեղինակը պնդում է, որ զբոսաշրջիկների գոհունակության գնահատականը հիմնված է զբոսաշրջիկի անաչառ գնահատականի վրա: Մեջբերում՝ «...Եթե նրա սպասելիքներն ավելի մեծ էին, քան ծառայությունից ստացված արդյունքը, ապա ծառայությունը որակյալ չէ»: Հարկ է նշել, որ հնարավոր է, զբոսաշրջիկի սպասումները լինեն սուբյեկտիվ և շատ դեպքերում չարդարացված: Նման գնահատականներ ստանալու դեպքում դժվար է նման պնդումներ անել որակի վերաբերյալ:

24. ՀՀ-ում հյուրանոցային ծառայությունների գնահատման նպատակով էջ 262-ում հեղինակը նյութ է ներկայացնում ARMQUAL ինդեքսի կիրառման մասին, որն իրականացվել է երկու հյուրանոցներում: Հարկ է նշել, որ արդյունքները չեն կարող հիմնավոր լինել, քանի որ հեղինակի կողմից չեն ներկայացվել մարզային այլ ՀՏՕ-ներում առկա գնահատականները:

25. Էջ 303-308-ում հեղինակը ներկայացնում է ՀՀ-ում կայուն զբոսաշրջության զարգացման հիմնահարցերը, առաջնային քայլերը, սակայն ՀՀ զբոսաշրջության կայունության չափման համար քայլեր կամ առաջարկություններ չկան: Առաջարկությունները ավելի շատ նման են ցանկությունների քան պրակտիկ գործողությունների: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից մշակվեին չափորոշիչների խմբեր կամ կիրառվեին չափորոշիչներ՝ ՀՀ-ում կայուն զբոսաշրջությունն ուսումնասիրելու, վերլուծելու և գնահատելու համար:

26. Աշխատանքում չեն քննարկվում ոլորտային հասարակական կազմակերպությունները և մասնագիտական միավորումները, որոնց գործունեությունն ուղղակիորեն կապված է ոլորտի զարգացման հետ:

27. Զբոսաշրջային տարբեր ձևերի զարգացման առաջարկությունները հիմնականում կրում են միանման բնույթ՝ ներկայցված ռազմավարության մշակման պահանջով, մարքեթինգային քաղաքականության ակտիվացման, լավացման, ծառայությունների որակի բարձրացման և այլնի ձևով: Տպավորություն է ստեղծվում, որ զբոսաշրջության

առանձին տեսակները չունեն առանձնահատուկ խնդիրներ և դրանց անդրադառնալու առանձին կարիք չկար:

28. Ատենախոսության բազմաթիվ մասերում նկատվում է թեմայի մակերեսային ներկայացման մոտեցումը, ինչը դոկտորական ատենախոսության համար անթույլատրելի է:

29. Հեղինակի կողմից օգտագործված գրականության ցանկի մեջ բացակայում են վերջին տարիների հետազոտվող թեմայով արտասահմանյան գիտական հրապարակումները:

30. Գրականության ցանկում հեղինակի անունով ներկայացված հոդվածները հիմնականում տեղեկատվական բնույթ են կրում:

31. Ատենախոսության էջ 7-ում հեղինակը նշում է «վերջին տարիների տարբեր հեղինակների կողմից կատարված գիտական հետազոտություններ և վերլուծություններ», սակայն եզրափակվում է 2003-2015 թվականների ժամանակահատվածով:

32. Հետազոտության նպատակ (էջ 8) ընդունել «ՀՀ զբոսաշրջության զարգացման տեսական, գործնական և հայեցակարգային հիմքերի մշակում»-ը, կարծում ենք ուշ է: Չէ որ «Զբոսաշրջության և նրա գործունեության մասին» ընդունված օրենքից արդեն 20 տարի է անցել: Գուցե մտածենք վերամշակման մասին, այն էլ հրատապ, քանի որ հենց հեղինակի կողմից է նշվում զբոսաշրջության ոլորտի ոչ գործուն օրենսդրական դաշտը, զարգացման ծրագրերի բացակայությունը և վիճակագրական հաշվառման թերի գործընթացը:

33. Շարադրանքում հանդիպում են խմբագրական և իմաստային թերություններ, առնվազն ոչ ճիշտ ձևակերպումներ: Օրինակ, ինչպես հասկանալ՝

- 71-րդ էջում բերված «Հարկ է նշել, որ ներկայումս զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունները չեն լիցենզավորվում, ինչի պարագայում կարող է սահմանվել նաև համապատասխան վերահսկողության մեխանիզմ, ու այդ կերպ, գուցե, կլուծվի վիճակագրական տվյալների հավաքագրման խնդիրը» կամ
- էջ 186-ի աղյուսակ 3.3.2-ի Ակնկալվող արդյունք սյունակում «Հայկական գինիների ճանաչման ապահովում հայերի և զբոսաշրջիկների համար»

- 196-րդ էջում ատենախոսության նորույթների վեցերորդ կետում «էկոզբոսաշրջության զարգացման խոչընդոտներից է ենթակառուցվածքների վատ որակը...»:

34. Էջ 87-ում հեղինակը նշում է. «Ներկայումս հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) համար գործում է միայն կամավոր որակավորման պահանջը, և շատ քիչ թվով ՀՏՕ-ներ են որակավորված», և հետևություն է արվում, որ «Լիցենզավորման դեպքում հստակ կսահմանվեն նրանց կողմից ծառայությունների մատուցման նկատմամբ եղած պահանջները, կիրականացվի վերահսկողություն, և արդյունքում կբարձրանա հյուրանոցային ծառայությունների որակը»: Ներկա ժամանակահատվածում վերահսկողության խիստ մեթոդների հետ բոլորովին համաձայնվել չի կարելի և ավելացնենք, որ քիչ թվով որակավորվող ՀՏՕ-ների, ավելի շուտ դրանց քանակի նվազումը, կապված է ՀՀ Կառավարության 10.06.2004թ. 946-Ն որոշման համաձայն «ՀՏՕ-ների որակավորման համար գանձվող պետական տուրքի» հետ, ինչի կապակցությամբ տնտեսվարողները նախընտրում են մնալ առանց որևէ որակավորման, քան իրենց որակյալ աշխատանքի համար տարեկան մեծ գումարներ վճարել:

35. Զարմանալի է, որ ՀՀ զբոսաշրջության նման զարգացման փուլում աշխատանքում հեղինակի կողմից 225-226 էջերում ներկայացվում են առաջարկություններ, թե որ մարզում, զբոսաշրջության որ տեսակը կարող է զարգանալ, երբ այդ ամենը նշված տեղերում վաղուց է իրագործվում: Նույնը՝ էջ 236-ում հյուրանոցային տնտեսության օբյեկտների ծառայությունների մակարդակի բարձրացման և ուսանողների զբոսաշրջային կազմակերպություններում փորձառության ամրացնելու մասով կատարված դեկլարատիվ առաջարկությունների մասին:

36. Աշխատանքի 2.4 բաժնում հեղինակն իրականացրել է ՀՀ զբոսաշրջության ոլորտի տնտեսական ազդեցության հիմնական ցուցանիշների գնահատում, որի շրջանակներում առանձին ռեգրեսիոն մոդելների միջոցով գնահատվել են տարբեր ցուցանիշների ազդեցությունները ՀՆԱ-ում զբոսաշրջության համախառն ներդրման, ՀՆԱ-ի և այլ ցուցանիշների վրա: Սակայն, գնահատումներն իրականացվել են միագործոն մոդելների հիման վրա: Այսինքն, յուրաքանչյուր մոդելում ներառվել է միայն

մեկ բացատրող փոփոխական, ինչը խնդրահարույց է, քանի որ կարող են բաց թողնված լինել կարևոր գործոններ: Օրինակ, Աղյուսակ 2.3.4-ում ներկայացված է ՀՆԱ-ի վրա զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի ազդեցության գնահատումը: Մինչդեռ մոդելում ներառված չեն ՀՀ ՀՆԱ-ի վրա ազդող այլ կարևոր գործոնները (օրինակ՝ արտաքին պահանջարկը և այլն): Վերջիններիս բացակայության պայմաններում մոդելում ստացված գործակիցները կարող են շեղված լինել, քանի որ մոդելը փորձում է ՀՆԱ-ի փոփոխությունները բացատրել միայն զբոսաշրջության ոլորտի ծախսերով:

37. Աղյուսակ 2.3.2-ում (էջ՝ 102) ներկայացված է ՀՆԱ-ում զբոսաշրրջության համախառն ներդրման վրա զբոսաշրջության գծով ընդհանուր ծախսերի ազդեցության գնահատումը ռեգրեսիոն մոդելի միջոցով: Հարկ է նշել, սակայն, որ ՀՆԱ-ում զբոսաշրջության համախառն ներդրումը հաշվարկվում է զբոսաշրջության գծով ծախսերի հիման վրա, հետևաբար՝ զբոսաշրջության գծով ծախսերը (որը բացատրող փոփոխականի զգալի մասն է կազմում) հանդիսանում են ՀՆԱ-ում զբոսաշրջության համախառն ներդրման կոմպոնենտ: Այդ առումով, մոդելի բացատրող և բացատրվող փոփոխականների միջև առկա է հաշվարկային կապ (բացատրող փոփոխականը բացատրվողի մի մասն է կազմում) և դրա մոդելային գահատումը այդքան էլ ճիշտ չէ:

38. Ատենախոսության ինքնատիպության (օրիգինալության) մակարդակը որոշելու նպատակով այն ստուգվել է Հայ-Ռուսական համալսարանում արդեն երեք տարուց ավելի օգտագործվող Antiplagiat.ru լիցենզիոն ծրագրային փաթեթի կիրառմամբ: Սակայն ստացված արդյունքները թույլ չեն տալիս համապատասխան եզրակացություն անել ատենախոսության ինքնատիպության (օրիգինալության) մակարդակի և առկա փոխառությունների մասին, քանի որ բազմաթիվ ստուգված աշխատանքների մեջ առաջին անգամն է, որ ծրագիրը չի «ճանաչում» տեքստի գրեթե ամբողջ ծավալը, բացառությամբ ատենախոսի որոշ հրապարակված աշխատությունների հատվածների, ինչը կասկածների տեղիք է տալիս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները զգալիորեն ազդում են հետազոտության արդյունքների տեսական ու կիրառական նշանակության վրա:

Գայանե Ռուբիկի Թովմասյանի «**Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում**» թեմայով դոկտորական ատենախոսությունը միայն մասամբ կարելի է որակել որպես ամբողջական հետազոտություն, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացման համար կարևոր են և անհրաժեշտ:

Այսպիսով, հաշվի առնելով բոլոր նշված դիտողությունները, կարծում ենք, որ Գայանե Ռուբիկի Թովմասյանի «**Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում**» թեմայով դոկտորական ատենախոսությունը **չի համապատասխանում** ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 8-րդ կետին:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի
Տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Է. Մ. Սանդոյան**

Հայ-Ռուսական համալսարանի
«Զբոսաշրջության և ծառայությունների ոլորտի» ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Տ.Շ. Դավթյան**

Հայ-Ռուսական համալսարանի
«Կառավարման և բիզնեսի» ամբիոնի պրոֆեսոր
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Վ.Գ. Աբրահամյան**

Հայ-Ռուսական համալսարանի
«Զբոսաշրջության և ծառայությունների ոլորտի» ամբիոնի
դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու՝ **Ս.Կ. Մանթարյան**

Հայ-Ռուսական համալսարանի
«Զբոսաշրջության և ծառայությունների ոլորտի» ամբիոնի
ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝ **Հ.Մ. Կանդիլջյան**

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**